

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ*

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գ. Ե. ՍԱԲՅՍՅԱՆ**

Դիտարկված 84 ստուգաբանական միավորները պատկանում են, ինչպես ասվեց սկզբում, այսպես կոչված «ժողովրդական» ստուգաբանության տեսակին, որը բնութագրվում է նրան մասնակից անունների կամ բառերի արտաբերին, զուտ հնչյունական նմանության պարագայով զուգահրժամբ և այդ հիմքի վրա նրանց կապի՝ մեկը մյուսից ծագելու հանգամանքի բացահայտմամբ:

Լայնորեն շարաշահվելով մեր օրերի գիտականաշուրջ սիրողների կողմից, այն միանգամայն բնական է հորենացու և նրա ժամանակի գիտության համար և այդ հիմաստով պետք է գիտահետազոտական մեթոդ համարվի:

Խորենացու մոտ հանդես եկող ստուգաբանությունների մեջ անշուշտ կան և՛ իր սեփական առաջարկները, ե՛ւ նրա որդեգրած միավորները: Զանգվածաբար զատել դրանք մեկը մյուսից, հստակորեն առանձնացնել «դրսից» նրա սուած օրինակները դժվարին, իսկ ավելի ճիշտ՝ անհնարին գործ է նկատվում նույնաբանության անսրող հակումը ստուգաբանությունների նկատմամբ, ինչպես և դրանց քանակությունն ու որակը, կանխավ կարելի է ենթադրել, որ դրանց մի ստվար մասը, հավանաբար՝ մեծամասնությունը, առաջարկված է հենց իր կողմից: Ինքը՝ Խորենացին, որոշ սուղ հնարավորություններ է ընձեռում այդպիսիները առանձնացնելու համար, սակայն հետևելով էլ դրանց, դժվար է հասնել որևէ երաշխավորված արդյունքի:

Ստուգաբանությունները, ճնշող մեծամասնությամբ, մատուցված են որպես օբյեկտիվ փաստեր: Դրանք հիմնականում ներկայացված են կամ ներդրածական ձևով, օր., Սեմը, իր որդի Տարբանի անունով «զգաւառն անուանէ Տարան», կամ կրավորական ձևով, օր., Գառնի ձեռակերտն «Ի Գառնկայ... անուանեցաւ Գառնի» և կամ սրանց այլևայլ տարբերակներով:

Որոշ դեպքերում անվանակոչության փաստը չի արձանագրվում, այլ պարզապես ներկայացվում են ստուգաբանվող և ստուգաբանող տարրերը (երբեմն նույնիսկ իրարից հեռու), օր., «Աշտիշատ», հաջորդ գլխում՝ «յաշտից տեղիք» (25):

Խիստ սահմանափակ դեպքերում է, որ Խորենացին նշում է իր մասնակցությունը ստուգաբանությանը: Այսպես, նա գրում է. «Եւ զԱրծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս», իսկ այնուհետև՝ «Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս», որտեղ «գիտեմ»-ը պիտի հասկանալ «կարծում եմ»: Երկու այլ դեպքում «գիտեմ»-ը փոխարինված է «ասեմ»-ով՝ «Ասեմ և զՍպարսից Իսադ ի վերայ զենարանաց, և Հավունիսդ՝ բազէակիրս և բազէակայս»: Երկու անգամ էլ Խորենացին ստուգաբանությունների նկատմամբ կիրառում է «ինձ թուե» արտահայտությունը:

Բնականաբար, մենք չենք կարող միայն այս սակավաթիվ ցուցանիշների վրա հենվելով առանձնացնել դրանց վերաբերող ստուգաբանությունները մնացած զանգվածից, և համարել վերջինս Խորենացու կողմից լիովին «դրսից» հավաքած, ուրիշների կողմից արված, ուստի և հրաժարվեցինք նման սահմանազատումից, գտնելով հանդերձ, որ այդտեղ շատ բան Խորենացուն է: Այստեղ արժե, թերևս, երկու լրացում անել: Առաջինը կապված է ստու-

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1998, № 1—2:

գաբանական յոթ դեպքի հետ (17, 41, 55, 60, 63, 64, 72), որոնք, բացի հորենացուց, ներկայացված են նաև Անանունի մոտ: Մենք գնահատում ենք այդ երևույթը՝ որպես երկու հեղինակների կողմից ընդհանուր աղբյուրի օգտագործման արգասիք: Սրան չի խանգարում այն հանգամանքը, որ նշված յոթից միայն հինգի ստուգաբանություններն են համընկնում երկու հեղինակների մոտ, երեքը՝ լիովին, երկուսը՝ փոքր տարբերությամբ, իսկ երկուսը չեն համընկնում՝ Մամիկոնեան—Մամգոն (հորենացի)—Մամիկ և Կոնակ (Անանուն) և Մասիս—Ամասիա (հորենացի)—Մարսեակ (Անանուն): Դիտելով այս երկուսը որպես հորենացու ներկայացրած այլընտրանք, համեմայնողիկ կարելի է ընդունել ողջ յոթնյակը որպես հորենացու «դրսից» առած փաստեր: Երկրորդ վերապահությունը վերաբերում է «ասեն» (ասում են, որ... իմաստով) բառով ներածվող երեք և «անուանեն»-ով ներածվող մեկ ստուգաբանություններին (վերջինը Արամի անունով մեր երկիրը այլ ազգերի կողմից Արմէն, Արմէնիկ անվանվելու վերաբերյալ): Սրանք էլ, դիտվելով որպես թեև անորոշ, բայց այնուամենայնիվ՝ հղումներ, թերևս պիտի դասվեն «ըրսից» առածների թվին:

Այս բոլորը, սակայն, չեն հստակեցնում սահմանազատման խնդիրը և հնար չեն տալիս դասակարգելու ամբողջ նյութն ըստ «սեփական» և «դրսից առած» կատեգորիաների: Սակայն ներկայացված 84 ստուգաբանությունները դասակարգվում են մի շարք այլ կտրվածքներով: Առաջին երկուսը, բնականաբար, թելադրվում են ստուգաբանական միավորի երկու տարբերով, որոնք են ստուգաբանվողը (պասսիվ) և ստուգաբանողը (ակտիվ): Ստուգաբանվող կամ պասսիվ տարբերակի կողմի տեսակետից նշված դանգվածը բաժանվում է երեք մասի՝ տոհմանուններ (նախարարական)՝ 27 միավոր, անձնանուններ՝ 19, տեղանուններ՝ 38: Երեք մասի է բաժանվում այն նաև ստուգաբանող կամ ակտիվ տարբերի առումով՝ իմաստային՝ 25 միավոր, անձնանուններին՝ 54 և ցեղանուններին՝ 5:

Այսպիսին է ստուգաբանական միավորների ընդհանուր պատկերը, որը և ներկայացված է վերը բերված մեր ցուցակում: Այստեղ արդեն նշմարվում է Պատմահոր՝ իր ձեռքի տակ եղած հատուկ անունների գանգալածից նպատակալաց ընտրություն կատարելու սկզբունքը, որի ընդհանուր էությունն է, ինչպես կտեսնենք, քաղած նյութը օպտիմալ տարբերակով «Հայոց պատմության» շարադրմանը ծառայեցնելու նպատակը:

Իրականացման մեթոդիկայի տեսակետից ևս ստուգաբանությունը բաժանվում է երեք խմբի: Ամենասովորականը և ամենարնգրկունը պարզ ստուգաբանության մեթոդն է, որի դեպքում ստուգաբանող բառը լիովին կամ մասամբ, կամ էլ որոշ շափով ձևափոխված վիճակում, հնչյունական առումով պարունակվում է ստուգաբանվող բառի ընդերքում (օր. Ձիւնական—ձիւն, Մաժար—Մշակ, Վահունի—Վահագն): Սրանք կազմում են 66 միավոր:

Երկրորդը «թաքնված ստուգաբանությունների» մեթոդն է, որի դեպքում, ինչպես նշված է արդեն վերը (ՊՔՀ, 1998, 1—2, էջ 113), ստուգաբանող բառը անմիջականորեն չի պարունակվում ստուգաբանվող բառի մեջ, այլ ներկայացված է նրա մոտիկ կամ հեռու համարժեքով, կամ էլ նրա ֆունկցիոնալ նկարագրությամբ, օր. Սպանդունի—(սպանդ, որը բացակայում է)—գեներան, Տուր—(տար՝ «մատնել») —քուլթյուն, Յրօնք—(ցրուել) —բաժանվել, գերեզմանք—«ուր անկաւ Բել»: Սրանց թիվը ութն է:

Երրորդը «երկրորդի ստուգաբանության» մեթոդն է, որի դեպքում ստուգաբանվող բառը բառի երկու մասերը առանձին-առանձին են ստուգաբանվում, ըստ որում մի մասը կառոդ է սովորական, իսկ մյուսը՝ «թարնամած» ձևով ստուգաբանվել (օր. Գնունի—գինի ունի, Աբգար—առաջ այլ, Մոգպաշտէ—մոգի աշակերտ): Սրանց թիվն էլ տասն է:

Խորհնացին ունեցել է մեթոդիկայի այլ, այլի մասնավորեցրած ձևեր, երանգներ, որոնք կիրառումը զրսևորվում է, այսպես ասած, «ողկույտների» ձևով, «Ողկույտների» առաջացման հիմքերը շատ այլազան են և, բացի այդ, նրանք կարող են խաչաձևվել, այսինքն նույն ստուգաբանական միավորը կա-

րող է տարբեր հիմքերով հանդես գալ մեկից ավելի «ողկույզների» մեջ: Բնութագրենք դրանցից մի քանիսը, շնավակնելով սպառելու հորենացու ստեղծագործական կարողությունները:

Նախարարական տոհմանունների ըստ իմաստի ստուգաբանության դեպքերը երկու «ողկույզ» են կազմում: Մեկը բաղկացած է հինգ միավորից և հեղած է տվյալ տոհմի ներկայացուցիչների՝ արքունիքում կատարած պաշտոնի բնութագրման վրա, օր. «Ջիւնավանսդ՝ ամառանոցաց պահակս և ձիւնակիրս»: Մյուսը՝ երեք միավոր հուշեր է պահպանում տոհմի նախահոր մարմնական կամ այլ առանձնահատկությունների մասին, օր. Դիմաքսյան—«դիմաց կէս» ստուգաբանությունը տոհմի նախահորը մարտում հասցված ահավոր վերքի մասին է վկայում:

«Ողկույզների» մի շարան կազմված է միևնույն անձի կամ իրի, որպես ստուգաբանող տարր, օգտագործման դեպքերից: Այսպես, «բագին» բառով ստուգաբանված է երկու տեղանուն՝ Բագարան և Բագաւան (կամ՝ Բագնաց տւան), «Մար» ցեղանունով ստուգաբանված են Մարմէտ և Մարաց մարզ տեղանունները, այլև Մուրացեան տոհմանունը, Գեղամ անձնանունով՝ Գեղ (լեռ), Գեղարքունի (լիճ), Գեղարքունի (գավառ) և Գեղամի (դաստակերտ) տեղանունները: Հայք («հայեր») ցեղանվամբ՝ Հայք (դաստակերտ) և Հայոց ձոր (գավառ) տեղանունները: Պարսկերեն «ամատ» («եկավ») բառով՝ Մարմէտ («Մարը եկաւ») տեղանունը և Ամատունի («Որպէս թէ՛ «Եկք») տոհմանունը:

«Ողկույզի» մի տարատեսակ է «կամ սար» (պարսկ. «կես գլուխ») և «դիմաց (դեմքի) կէս» (հայերեն) միանշանակ արտահայտություններով, համապատասխանաբար, Կամսարական և Դիմաքսյան տոհմանունների ստուգաբանումը:

«Ողկույզ» են Սեմ և Զրուան (ըստ հորենացու՝ նույն Աեմը՝ «արևելյան կողմերում») անձնանուններով Սիմ (լեռ) և Զարուանդ (գավառ) տեղանունների և Սիսակ ու «Աղու» (Սիսակի մականունը) անձնանուններով Սիսական (Սիւնիք) և Աղուանք տեղանունների ստուգաբանությունը:

Մեթոդիկալի տեսակետից «ողկույզ» են կազմում Երուանդավան և Մարաց մարզ տեղանունները: Երկուսի մեջ էլ հորենացին, մեր կարծիքով, փոփոխություններ է մտցրել ստուգաբանությունը ապահովելու նպատակով. Երուանդ—աւան—ը դարձրել է Երուանդա(յ)-վան, և ստուգաբանել «վանել» բայով, իսկ «Մարանց»-ը դարձրել է «Մարաց» և ստուգաբանել «մար» ցեղանունով (22 և 82):

Սրանց հարում է Հաւունի և Վահունի տոհմանունների կազմավորումը այլ աղբյուրներում հանդիպող և, հավանաբար ճիշտ, Հաւունի (Հաւենունի) և Վահունի ձևերից՝ «հաւ» և «Վահագն» բառերով ստուգաբանությունը դյուրացնելու նպատակով (4 և 37):

«Ողկույզներ» են նաև մի կողմից՝ Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ և մյուս կողմից՝ Յապետոսթե, Մերոզ, Սիրաթ, Թակլադ անունների ստուգաբանական համադրումը և Բագարատ, Աշուտ, Վարադ և Սմբատ անունների ծագեցումն ու ստուգաբանումն իբր հին հրեական Բագադիա, Ասուդ, Վաղարհա և Շամբատ անուններից:

Մենք արդեն այլ առումներով ծանոթ ենք Ամատունի տոհմանվան, Մարմետ տեղանվան և Կամսար անձնանվան ստուգաբանություններին, բայց տրվել է համադրության մեջ նրանք մի «թարգմանական ողկույզ» են կազմում՝ ստուգաբանված լինելով ամետ— «եկաւ» և կամ սար—«կես գլուխ» պարսկերեն բառերով: Ողկույզ են և Գին, Գնել, Սյուկ ու Աբեղոյ անձնանունները, որոնք, չօգտագործվելով հանդերձ Գնունի, Սյուկունի, Աբեղեան նախարարական տոհմանունները ստուգաբանելու նպատակով, հանդես են գալիս որպես պահեստային միջոցներ, և խաղում, հավանաբար, նշված տոհմանուններից ծնված սնձնանունների դերը:

Կարելի է բաղմադնել «ողկույզների» թիվը, սակայն մեր թեմայի համար ավելի շահեկան է ներկայացնել նախորդի նման «չկայացած ստուգաբանումը»:

բանություններին» ևս մի երկանդամ «ողկույզ», որը, բնականաբար, բացակայում է մեր ցուցակում: Ռշտունի և Գողթնեցի նախարարական տոհմանունների մասին հորենացին գրում է. «Ոչ գիտեմ, թե՛ յանուն արանցն զգալառսս անուանեալ, և թե՛ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ» (II, 8): Այս բառերն ավելորդ անգամ բնութագրում են հորենացու պրպտող միտքը, որը, սակայն, տվյալ դեպքում չի կարողացել գտնել խնդրի լուծումը և հարկ է համարել խոստովանել այդ փաստը: Պատկերը լրացվում է նաև հետևյալ «չկայացած» ստուգաբանության դեպքով. «Եւ զգեցուցանողս իւր զձեռէս ի գաւակէ բանանացուց. և անուն կոչէ ազգին Գնթունիս, ոչ գիտեմ, էր աղագաւ» (II, 7), խոստովանում է հորենացին:

Երկու խոսք էլ ավելացնենք հորենացու՝ ստուգաբանություններին տրվող որակավորման վերաբերյալ: Այդպիսի երկու դեպք կա. Արամանեակը, ասում է հորենացին, «զլեառնն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած» (II, 12): Ահա, սա, տարօրինակաբար, «յանկագոյն» է հնչել հորենացու ականջին, թեև ստուգաբանող անվան միայն առաջին երեք տառն են առկա ստուգաբանվողի մեջ: Նույն գլխում կարգում ենք. «Միսակ ...զաշխարհն կոչէ իւրով անուամբն Միւնիք. այլ պարսք յստակագոյնս ևս Միսական կոչեն» (I, 12):

Այս երկուսի համադրումից երևում է, որ իր ստուգաբանությունները բնութիւն հորենացին լավ է տարբերել, թե որն է «յստակագոյնը», բայց և չի խորշել իր շփանհիշների «լայնացված» կիրառումից, ինչպես «յանկագոյնի» դեպքում է, քանի որ դա բազմացնում էր նրա ստուգաբանական հնարավորությունները:

Բերված նյութից հառնող բոլոր այս ստուգաբանական կտրվածքներից, մեթոդներից, դասակարգումներից, «ողկույզներից», մեր կարծիքով, բխում է այն եզրակացությունը, որ ի դեմս հորենացու ստուգաբանությունների, մենք ունենք ոչ թե պատահական դեպքերի զանգված, այլ մշակված համակարգ, կերտված որոշակի շփանհիշերով, սկզբունքներով և որոշակի նպատակով, որի բնութագրմանն էլ անցնում ենք:

* * *

Սկզբնական այն տեղեկատվությունը, որը հատուկ է ստուգաբանության բոլոր դեպքերին և նրա բուն էությունն է կազմում՝ դա հատուկ անունների բացատրությունն է, նրանց ծագման, բուն իմաստի բացահայտումը, իհարկե, հորենացիական ըմբռնմամբ: Օրինակ, Արմալիր—Արամայիս ստուգաբանությունը բացատրում է Արմալիր քաղաքանվան ծագումը և հիմնադրման հանգամանքները (60): հորենացու 84 ստուգաբանություններից 51-ը կանգ են առնում այս առաջին աստիճանի վրա: Եվս 24 դեպք մագլցում են երկրորդ աստիճան: Այդտեղ, առաջին աստիճանի տեղեկատվության վրա կառուցվում է պատմական մեծ կամ փոքր դրվագ: Օրինակ՝ Դիմաբայան—դիմաղ կէս ստուգաբանության վրա կառուցվում է ճակատամարտում տոհմի նախնու՝ դեմքի կեսից զրկվելու պատումը (6): Եվս մի քանի դեպքում ստուգաբանությունները հասնում են երրորդ աստիճանին: Այստեղ պատմական դրվագին գումարվում է մի լրացուցիչ տեղեկություն կամ առասպել, որն անչլուում / ստուգաբանությանը, բայց և դուրս է գալիս նրա սահմաններից: Օրինակ՝ Սոսանուէր—սոսի—ձօնել ստուգաբանությունից (15) հետևում է այդ մականունը կրած Անուշավանի՝ սոսիներին ձոնված լինելու հանգամանքը, իսկ ույդ-տեղից էլ սկիզբ է առնում Արմալիրում Արամանյակի տնկած սոսիների սոսափյունից գուշակություններ անելու՝ հնում ընդունված սովորության մասին պատմությունը: Վերջապես, առկա է նաև շորրորդ աստիճանը, որն իրենից ներկայացնում է այդ ստուգաբանությունների երրորդ աստիճանին (եթև դասառասպել է) գումարված՝ առասպելների խորենացիական «ճշմարտեցումը» (այս վերջին տերմինը համագամանորեն կպարզաբանվի ստորև):

Ինչպես տեսնում ենք, հորենացու ստուգաբանությունների տեղեկատվու-

թյունն առատ է, բայց և ոչ համարժեք, այսինքն, նրա տարբեր միավորները շատ տարբեր արժեք ունեն հենց հորենացու համար և, ավելացնենք, նաև մեզ համար, որպես հորենացու երկր հետազոտողներին:

Եվ այսպես, եթե, ինչպես արդեն սովոր ենք, դարձյալ առաջին հերթին անդրադառնանք նախարարական տոհմանունների ստուգաբանություններին՝ այս պիտի շեշտենք, որ հորենացին իզուր չի վաստակել «նախարարություն» պատմաբանի» համբավը: Հիրավի, իր «Պատմության» մեջ հանդես եկող բոլոր 50 նախարարական տոհմերը նա ջանացել է օժտել հնարավորին շագարուստ պատմությամբ: Բնականաբար, աղբյուրների ընձեռած հնարավորությունները տոհմերին այդ իմաստով բավական անհավասար պայմաններ մեջ են դրել:

Հորենացին փորձել է յուրաքանչյուր տոհմի համար հարցաթերթիկ լրացնել, որի հիմնական կետերն էին. ա) նախարարական տոհմի ծագումը, բ) նրա «նախարարացումը» և պաշտոնը (դերը) արքունիքում կամ պետական համակարգում, գ) տոհմի կարկառուն ներկայացուցիչները, նրանց բարի և վար գործերը (սխրանքներ, ապստամբություններ, հանցագործություններ և այլն), դ) տոհմի վախճանը (եթե տեղի է ունեցել մինչև հեղինակի ժամանակը):

Հորենացին ջանացել է իրեն հասանելի բոլոր միջոցներով յուրաքանչյուր տոհմի համար լրացնել այս սխեման և դրա մեջ դեր են խաղացել տոհմանունների ստուգաբանությունները: Ամենաբիշը, Պատմահորը հաջողվել է տալ նախարարական տոհմի ծագումը և նրա նախարարական շուքի սկզբնավորումը: Բայց սա էլ ֆեոդալական հասարակության մեջ նախարարական (ավատական) տոհմի ծանրակշռությունն ապահովելու համար ավելի քան կարևոր էր: Լավագույն դեպքերում տրվում է տոհմի փարթամ պատմությունը: Մյուս դեպքերն ըստ հազեցվածության դասավորվում են սրանց միջև:

Որպես նշված սխեմայի, հարցաթերթիկի լրացման (ընդ որում՝ տոհմանվան ստուգաբանության արդյունքների կիրառմամբ) ցայտուն օրինակ բերենք Վահունիների նախարարական տոհմը: Հորենացին Վահունիներին շորս անգամ է անդրադառնում, լրացնելով բերված հարցաթերթիկի բոլոր շորս կետերը:

Ա) I, 31. «Սորա (Տիգրան Երվանդյանի—Գ. Ս.) որդի Բաբ, Տիրան, Վահագն, զորմէ ասեն առասպելք աշխարհիս... («Երկնէր երկին...» և այլն), և սորա են զարմք Վահունիք»: (Ծագում):

Բ) III, 8. «Բայց յորդուոցն Վահագնի գտեալ արս, որք ինքնակամ խրնդրեցին զմեհենից պաշտամունսն՝ պատուէ մեծապէս, ի ձեռն տալով նոցա զբրմութիւնն. և կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն, և անուն կոչէ Վահունիս»: (Նախարարության սկզբնավորումը, ինչպես և քրմապետություն, կապված է, անկասկած, Վահագնից ծագելու հետ, որը և հստակվում է հաջորդ կետով):

Գ) II, 12. Արտաշեսը «գտեալ յԱսիալ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեացեն յԱրմաւիր: Զօր առեալ քրմապետացն, որ էին յագգեն Վահունեաց՝ զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր. իսկ զՀերակլեայ՝ զառնապատկերն... զՎահագն իւրեանց վարկանհիւով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»: (Հանդամանք, դարձյալ կապված Վահագնից ծագելու հետ)

Դ) II, 14. Տիգրանը (Արտաշեսի որդին) ցասուցեալ ընդ Վահունիսն, եթէ ընդէր յիւրեանց սեպհականին իշխեցին կանգնել զպատկերն Հերակլի... րնկենու զնոսա ի քրմութենէն, և զգիւղն յարքունիս առնու, յորում պատկերօն կանգնեցան»: (Վախճան, նորից կապված Վահագնից ծագելու հետ):

Ինչպես տեսնում ենք, Վահունի—Վահագն ստուգաբանությունը, ծառայելով հանդեռ հորենացու նպատակներին, իր հետ նաև հետաքրքրազույց տեղեկություններ է բերում հայ հեթանոսական կրոնի մասին:

Վերը մենք խոստացանք անդրադառնալ այն «պատմաառասպելական»

մեկնաբանմանը, որին հորենացու համար հնարավորություն է ստեղծել Մուրացեան տէր—Մարացուցն տէր (80) ստուգաբանությունը:

Սրա հետ կապված պատումը նույնպես կարելի է տեղափոխել վերը նշված սխեմայի մեջ:

Ա) 11, 8. «Բայց յետ կարգելոյ զտուն թագաւորին (Վաղարշակի—Գ. Ս.) երկրորդ թագաւորութեանն լինէր ի գաւակէ Աժգահակայ, Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մուրացեան կոչեն: Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին Մուրացեան տէր, այլ Մարացուցն տէր»: (Տոհմի և նախարարութեան ծագում):

Բ) նույն տեղում՝ պաշտոնը արքունիքում՝ «երկրորդ թագաւորութեանն»:

Գ) 11, 46. Արտաշեսը Երվանդի դեմ պայքարելիս, միայն Մուրացեան տոհմի նահապետ Արգամից էր երկյուղում, ուստի և «առաքեալ պատգամ առ Արգամ, նահապետ Մուրացեան հանդերձ բազում երդամբք՝ թողուլ ի վերա նոր զոր ինչ գտեալ էր յԾրուանգայ, և կրկին այլ յաւելուլ, միայն զ՛ղերուանդ թողեալ ի բաց գնասցէ»: Քանի որ Արգամը կատարում է այդ պատգամը, ապա Արտաշեսը, գահակալելով, (11, 47) «Տայ և առնն քաջի և պատուականի Արգամայ ղիսոստացեալ գահն երկրորդական, և պսակ յակնթակապ...» և շատ ուրիշ բաներ:

Սակայն Սաթինիկ թագուհին սիրահարվում է Արգամին, ինչի շուրջը խոսվում է և առասպելում, որտեղ Արգամը Արգաւան է անվանված (11, 51): Սուսկսում է դավեր նյութել Արտաշեսի դեմ (1, 30):

Դ) Արտաշեսն իր որդի Արտավազդի ձեռքով ավերում է Մուրացեանների ապարանքը և սպանում Արգամին և նրա ազգի երեւելիներին (11, 51):

Ինչպես տեսնում ենք, այս ամբողջ պատմությունը ևս հեցած է Մուրացեան (տոհմանուն) — «մար» (ցեղանուն) և սրա հետ խաչաձևվող՝ Արգաւան Արգամ (անձնանուններ) ստուգաբանությունների վրա:

Մուրացեան-մար ստուգաբանությունն իր ետևից բերում է վիշապազունների առասպելը: Այն ծայր է առնում մարաց Աժգահակ (—վիշապ) թագավորից: Սրան հաղթելով ու սպանելով, Տիրբան Երվանդյանը վիշապազուններին իրենց թագուհի, Աժգահակի առաջին կին Անուշի հետ միասին բնակեցնում է Սասիս լեռան վիհում, մինչև Գողթան սահմանը: Այստեղից է ծագում վիշապազն Արգավանը, որն, ըստ հորենացու, նույնանուն է Մուրացեան (Մարացուց տէր) Արգամի հետ: Ըստ առասպելի, վիշապազունները գողանում են Արտաշեսի որդի Արտավազդին և տեղը դե են դնում:

Պակայն ցուցադրական չէ նաև Արծրունի—արծուի ունի ստուգաբանությունը: արծարծումը: հորենացին գրում է. «Եւ Արծրունիսդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա (Վաղարշակ թագավորի—Գ. Ս.) կրէին» (11, 7):

Ինչպես տեսնում ենք, այսքանը լրացնում է հորենացու Արծրունիներին ներկայացրած հարցաթերթիկի միայն Բ), այն է՝ արքունիքում ունեցած պաշտոններին վերաբերող կետը, իսկ մնացած կետերը, պիտի ստել, շարադրված են «Պատմութեան» մեջ այլ նյութերի հիման վրա:

Սակայն այստեղ մենք հանդիպում ենք ստուգաբանությունից բխող տեղեկատվության միանգամայն այլ ուղղության հետ: հորենացին շարունակում է հենց ընդհատված տեղից այսպես. «Թողում զառասպելացն բաջաղանս, որ ի Հաղսմակերտին պատմին, մանկան նիրհելոյ անձրև և արև հակառակեալ, և հովանի թռչնոյ՝ պատանուոյն թալկացելոյ»:

Այստեղ պարզորոշ կերպով խոսվում է Արծրունի տոհմանվան ստուգաբանության մեկ այլ, «հաղամակերտյան» (այսինքն, քանի որ Հաղսմակերտը Արծրունիների նստավայրն էր, ապա՝ տոհմական) տարբերակի մասին: հորենացին վճռականորեն ժխտում է այդ տարբերակը (որը, ի դեպ պատկանում է «թաքնված» ստուգաբանության տեսակին), որպես առասպելական: Սակայն, բացի «իրական-առասպելական» հակադրությունից, որը սովորական է Պատմահոր համար, այստեղ կա և մեկ ուրիշը: հորենացու ստուգաբանությունը առաջարկված է մեծապետական դիրքերից, այստեղ շեշտված են Արծրունիների ծառայողական ֆունկցիաները՝ թագավորի նկատմամբ, իսկ «հաղա

մակերտյան», այսինքն՝ տոհմական տարբերակը հենվում է հեքիաթային տարածված մի սյուժեի վրա՝ հսկայական թռչնի թևերի հովանու տակ փրկություն գտած մանկան մասին: Հստ որում այդ սյուժեն իր շարունակության մեջ, փրկված մանկանը սովորաբար հասցնում է մեծագույն պատիվների և դիրքերի: Նկատի ունենալով հորենացու սառը վերաբերմունքը Արծրունիների նկատմամբ, նրա մոտեցումն այս հարցին լիովին բացատրելի է: Այս կապակցությամբ բավական հետաքրքրություն են ներկայացնում Արծրունիների տոհմական պատմիչ թովմա Արծրունու հաղորդած տեղեկությունները, որոնց մեջ կատարյալ մոռացության են տրված հորենացու ներկայացրած երկու տարբերակներն էլ, թեև դրանք, հորենացու ամբողջ երկի հետ միասին, անշուշտ, ծանոթ են հղել թովմային¹:

Այսպես թե անպես, բայց հորենացու ներկա ստուգաբանությունը հարստացնում է նրա պատմությունը (նաև հայ առասպելաբանությունը) մինոր առասպելով՝ պատանու և արծվի մասին:

Լախարարական տոհմանունների ստուգաբանություններից ծագող տեղեկատվության ցուցադրումը կարող է երկարորեն շարունակվել, այն տարբերյալներով ընդգրկում է բոլոր ստուգաբանված դեպքերը: Սակայն անձնանունների ստուգաբանությունը ևս քիչ բան չի տալիս: Բերենք մի քանի օրինակ: Այսպես. Սանատրուկ—«տուրք Սանոտայ» (9) զույգի Սանոտը հանդես է գալիս որպես Սանատրուկ արքայի դայակը: Կորովաց լեռներում ճանապարհորդելիս ընկել են բքի տակ, թաղվել ձյան մեջ: Դայակը երեք օր ու գիշեր պահել է մանկանը իր կրծքերի միջև, փրկել: «Ձորմ է առասպելաբանեն,—գրում է հորենացին,—եթէ կենդանի իմն նորահրաջ սպիտակ յաստուածոցն առահալ՝ պահէր զմանուկն»: Բայց իսկույն ևեթ, իր սովորության համաձայն, Պատմահայրը ձգտում է «ճշմարտեցնել» առասպելը. «Բայց որչափ մեք եղար վերահասու՝ արպէս է, շուն սպիտակ ընդ խնդրական լեայ, պատահեաց մանկանն ի դայիկին» (II, 36): Այստեղ ևս ստուգաբանությունն իր հետ առասպել է բերում:

Արա Գեղեցիկի թոռ Անուշավանի Սօսանուեր պատվատիտղոսը և դրա ստուգաբանությունը որպես «սօսիներին ձօնյայ», նոր լույս է սփռում հայ հեթանոսական կրոնի և ծիսակատարությունների խավար բնագավառը: Այստեղ հանդես է գալիս ոչ միայն հին հայերի՝ սոսիների սաղարթների սոսափյունից գուլակություններ անելու սովորույթը, այլև դրան, հավանաբար «Սօ-

1 Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, I, 2, էջ 83—84: Թովմայի համար նվաստացուցիչ պիտի լիներ Ասորեստանի Սենքերիմ իագավորի որդիներ Ադրամելիթից և Սանասարից ծագող Արծրունիներին համարել թագավորի արծվակիրներ: Իսկ «հաղամակերտյան» տարբերակի բացակայությունը, թերևս, կարելի է բացատրել այսպես՝ դարերի ընթացքում այն դուրս էր մղվել տոհմական բանավոր ավանդությունից, ուստի և խորթ էր թվում Թովմային:

Թովման առաջ է քաշում Արծրունի տոհմական դարձյալ «արծուի» բառով ստուգաբանման միանգամայն այլ մեկնաբանություններ: Նա գրում է. «Խնդրէ զնա (Արծրունիների) Կյուրոս անունը կրող նախնուն—Գ. Ս.) Վաղարշակ յԱրշակայ և առնու անէ զնա ընդ իւր ի Հայս. և անուանէ զնա Արծրունի. առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ. դարձեալ բոտ պատահման և տարբերութեան՝ արծունդն կերպարանօք: Բայց ոչ գիտիմ, թէ յանուն աշխարհին թէ բոտ կերպարանին անուանեաց զնոսա Արծրունիս: Երկրորդ վասն բնակութեան նախնեացն նորա Ադրամելիեայ և Սանասարայ Արզն՝ կոչեցին Արզրունիք: Երրորդ վասն արիութեան բազոթեանն, արծուաբար քաջարտապէս խիզախութեանցն ի մարտս պատերազմացն՝ յարծուիս առակելին զնոսա»: Ինքը՝ Թովման նախապատմությունը տալիս է այս մեկնաբանություններից առաջինին: Դեռ ավելին, թագավորական արծվակիր լինելու պարտականությունը Արծրունիներից էլ ավելի հեռացնելու նպատակով, Թովման վերագրում է այն մեկ այլ տոհմի: Հատկանշական է, որ դրա համար ընտրվում է Ածղահակի զավակներից ծագող տոհմը, որը հորենացու մոտ անվանված է Մուրացեան, և որի նահապետները, ըստ հորենացու, հղել են թագավորության երկրորդ դեմքերը: Այսինքն, խաղացել են այն դերը, որը, թերևս, ակնկալում էին իրենք Արծրունիները:

սանուներ» պատմատիտղոսով և սրբավայրի քրմապետի պաշտոնով հայոց նահապետների անմիջական մասնակցության փաստը: Դրանք, ըստ հորենացու, սկզբնավորված պիտի լինեին դեռևս Արամանյակի ժամանակ (I, 20):

Առեղծվածի առջև է կանգնեցնում Վայկունիք—Վայկուն ստուգաբանությունը: Վայկունիքը գալառ է (ըստ հորենացու՝ լեռ) Սևանա լճի ավազանում, Վայկունը՝ Հայաստանն ասպատակած մի «յեղուզակ», որը «խռովէր զերկիրն Հայոց» այն պահին, երբ հայոց Տիգրան թագավորը պաշարում էր Պաղեստինի Պաղատայից քաղաքը: Լսելով Վայկունի մասին, Տիգրանը, փրկագին ստանալով քաղաքից, շտապում է Հայաստան (II, 14):

Առեղծվածայինն այն է, որ, ինչպես ասվել է վերը, Տիգրանի կողմից Պաղատայիցի պաշարման, փրկագին, Հայաստանից ստացված բռթի և Տիգրանի ածապարելու պատմությունն անում է նաև Հուսեպոս Փլավիոսը՝ իր «Հրեական պատերազմի» մեջ: Բայց նրա մոտ Հայաստանը «խռովողը» ոչ թե Վայկունն է, այլ հռոմեական զորավար Լուկուլոսը: Թե սա ինչպես է վերածվել Վայկունի՝ այդ է առեղծվածայինը և սրա բացատրությունը մենք դեռևս չունենք: Սակայն հորենացու այս տեղեկատվությունը ինքնին շատ հետաքրքրերական է, այն լրացնում է նրա Պատմության մի քանի նմանօրինակ տեղերի թիվը:

Կարելի է բազմացնել և անձնանունների հետ կապված օրինակները, բայց ավելի նպատակահարմար է այժմ էլ դիմել տեղանունների ստուգաբանության բերած տեղեկատվությանը, որն, անսպասելիորեն, շատ ուրույն կերպարանք է ձեռք բերում:

Ստուգաբանված տեղանունների ընդհանուր թիվը 38 է: Աշխարհագրական տեղաբաշխման տեսակետից դիտարկելիս, գտնում ենք, որ դրանցից երկուսը՝ Հայք և Արմեն (Արմենիկա), ընդգրկում են ողջ Հայաստանը, 5-ր ցրված են, ըստ որում դրանցից մեկը՝ Մաթաթը, Հայաստանից դուրս է: Մնացած 31-ը խիստ կենտրոնացած են. 8-ը՝ Վանա լճի շուրջը, 23-ը՝ Արարատյան դաշտում և նրա շրջակայքում: Ի՞նչ է հետևում այստեղից: Արդյո՞ք այն, որ Արարատյան դաշտը մասամբ և Վանի շրջակայքը, ավելի ծանոթ էին հորենացուն, քան Հայաստանի մյուս, ստուգաբանված տեղանուններից զուրկ շրջանները: Այսպիսի եզրակացությունը հապճեպ կլիներ և հակասում է այն փաստին, որ «Հայոց պատմության» մեջ, բացի մեր 38 տեղանուններից, չիշատակված են ևս շուրջ 120 տեղանուն, որոնցով բավականաչափ հագեցված են, բացի մեր նշած երկու շրջանից, նաև մյուս շրջանները:

Արդ, ինչո՞ւ հորենացին հավասար աչքով չի նայել նաև այդ շրջաններին և զրկել է ստուգաբանությունից նրանց տեղանունները, մանավանդ որ կան այնտեղ այդ նպատակին ծառայեցնելու համար շատ հարմարները, ինչպես՝ օրինակ, Ամդանական, Աղթամար, Արարադ (!), Բագրևանդ, Զարիշատ, Խրամ, Հաշտեանք, Մարանդ, Վայոց ձոր, Փայտակարան և այլն և այլն: Անշուշտ, ստուգաբանական միջոցների պակասությունը չէ, որ ետ է պահել հորենացուն ընդգրկելուց իր համակարգում նաև դրանք, դրանց մի մասը, կամ ուրիշները, այլ նրա հետապնդած հատուկ նպատակները:

Տեղանունների նշված խմբերը ուշադրությամբ զննելիս սպարզվում է, որ խնդիրը իրենց՝ աշխարհագրական շրջանների մեջ չէ, այլ նրանց հետ կապված մի այլ երևույթի: Ինչո՞վ են աչքի ընկնում հորենացու Պատմության մեջ նշված երկու՝ Վանի և Արարատյան դաշտի շրջանները: Անշուշտ, առասպելների արտակարգ հարստությամբ: Համոզվելու համար, որ ստուգաբանությունների նշված կուտակման պատճառը հենց այդ է, դուստալորում ենք դրանք մեկ այլ կտրվածքով, քան արված է մեր հիմնական ցուցակում, այն է՝ ըստ առասպելների: Այդ դեպքում ստանում ենք հետևյալ պատկերը: 38 ստուգաբանված տեղանուններից 4-ը կապվում են Օլիմպիոդորոսի պատմած՝ աստ-

⁸ Մանանդյանի բացատրությունը (Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Գ. Ա, Երևան, 1944, էջ 189) համոզիչ համարել չի կարելի:

վածաշնչական Սեմի՝ Հայաստանի բնակեցման առաջին փուլին վերաբերող առասպելին (I, 6): Դրանք են.

Սիմ (լևո)—Սեմ

Ջարուանդ—Ջրուան

Տարոն—Տարբան

Յրոնք—Սեմի որդիներից բաժանման վայրը

Հաջորդ հինգը կապված են Մար Աբաս Կատինայի պատմած՝ Հույկ նահապետի՝ Հայաստանի բնակեցման երկրորդ փուլին վերաբերող առասպելին (II, 11): Դրանք են.

Հայք (երկիր)—Հայկ

Հայք (դաստակերտ)—հայք (հայեր)

Հայոց ձոր—հայք (հայեր)

Հարք—հարք (հայրեր)

Գերեզմանք—Բելի մահվան վայրը:

Եվս երկուսը կապված են Արամի արշավանքների ավանդույթյան հետ (I, 14): Դրանք են.

Արմէն, Արմէնիվք—Արամ

Մաժաք—Մշակ

15-ը կապված են Արամանյակի և նրա սերունդների՝ Արարատյան դաշտի և նրա շրջակայքի բնակեցման առասպելի հետ (I, 12): Դրանք են.

Արագած—Արամանեակ

Արմաիր—Արամայիս

Երասխ—Երաստ

Շիրակ—Շարայ

Մասիս—Ամասիա

Փառախոտ—Փառսխ

Ցուլակերտ—Ցուլակ

Գեղ (լեռ)—Գեղամ

Գեղարքունի (գաւառ)—Գեղամ

Գեղարքունի (լիճ)—Գեղամ

Գեղամի (դաստակերտ)—Գեղամ

Գառնի—Գառնիկ

Սիւնիք, Սիսական—Սիսակ

Այրարատ—Արայ

Աղուանք—«Աղու»

Մնացած 12-ից 5-ը կապված են Օղյումպ քուրմի պատմած երվանդ-Արտաշես պաշարի հետ (II, 46): Դրանք են.

Բագարան—Բագին

Մարմետ—«մար ամատ»

Մարաց մարգ—մար

Երուանդավան—վանել

Մննդոց—բաղմաթիվ և տարբեր կենդանիներ

Վերջին 7-ը չեն միավորվում որևէ պիտակի տակ: Դրանք են.

Վայկունիք—Վայկուն

Վանանդ—Վունդ (Վինդ)

Արշարունիք—Արշաիր

Սանեայ այրք—Մանի

Բագաւան—Բագին

Որթք—որթ

Աշտիշատ—«յաշտից տեղիք»

Այսպիսով, 38 ստուգաբանված տեղանունից 26-ը կապվում են հորինացու մանրամասն շարադրած՝ հայ ժողովրդի ծագման և տարածման առասպել-ավանդույթներին հետ: Այստեղ դժվար է միտում և նպատակ շտեմել: Խորենացին ցանկացել է այս, իրեն հատկապես սիրելի դրվագները, կարծես նկարագրող և առավել շոշափելի, տեսանելի դարձնել, նրանց մեջ հանդես եկող Սեմի՝ դեպի Տարոն, Հայկի՝ դեպի Հարթ և Վանա լճի ավազանը, Արամանյակի՝ դեպի Արարատյան դաշտ և նրա սերունդներին, հատկապես Մարտի, Գեղամի, Սիսակի երթուղիները, որոնք տանում են, համապատասխանաբար, դեպի Շիրակ, Սևանի ավազանը, Սյունիք և Աղվանք: Վերջապես, Արամի հաղթարշավը դեպի Կապադովկիա:

Գալույ Արտաշեսի և նրա՝ Երվանդի դեմ մղած պայքարի ու հաղթանակի պատմությանը, խորենացին, հավանաբար, իր գնահատականները սանդղակում, ինչ-ինչ պատճառներով, այն դասել է մյուսների շարքը:

Հայագիտության մեջ արձանագրված է, որ Մովսես խորենացու պահպանած այս առասպել-ավանդույթները՝ գոնե երթուղիների իմաստով, իրենց հաստատումն են գտնում իրերին ժամանակակից, այսինքն՝ մ. թ. ա. II հազ. վերջին և I հազ. առաջին դարերի սեպագրական՝ խեթական, ասորեստանյան, ուրարտական, այլև հին հունական և հին պարսկական աղբյուրների մեջ: Մովսես խորենացու մատուցած ստուգաբանություններն, այսպիսով, իրենց ժողովրդաստուգաբանական բնույթով հանդերձ, կարծես լապտերասյուններ շարելով, բավականաչափ հստակեցնում են այդ երթուղիները, նպաստելով հայերի և հայերենի՝ լեռնաշխարհով մեկ տարածման ընդհանուր պատկերի վերարտադրմանը:

Ի՞նչ եզրափակումն սույն աշխատության, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ խորենացու ստուգաբանական համակարգին ևս մի տեսանկյունից.

Նախորդ շարադրանքից կարելի էր համոզվել, թե որքան սերտորեն են կապված խորենացու ստուգաբանությունները նրա իսկ պատմած առասպելներին հետ: Մակայն, խոսքս այստեղ լինելու է ոչ թե այդ կոնկրետ նյութական կապերի մասին, այլ վերաբերում է խորենացու ստեղծագործության ստուգաբանական և առասպելական ոլորտների ավելի բարձր մակարդակի փոխառնչությունը, կարելի է ասել, նրանց հարազատությանը, եթե ոչ նույնությանը:

Խորենացու հանդես բերած առասպելները երկփեղկ են: Փեղկերից մեկը բուն առասպելն է, որը շատ վառ գույներով, հաճախ մանրամասն, երբեմն էլ բառացի մեջբերումներով շարադրում է Պատմահայրը: Մյուս փեղկը առասպելի «ճշմարտեցված» տարբերակն է: Առասպելների «ճշմարտեցման» այդ երկփեղկը փեռնա 100 տարի առաջ դիտարկել ու փայլուն բնութագրել է և «ճշմարտեցում» տեղիին էլ առաջարկել Մանուկ Աբեղյանը: Այն կայանում է Պատմահայր՝ իր իսկ շարադրած առասպելների գերբնական, «հրաշքային», պարզապես նաև արտասովոր կողմերը, նրանց «այլաբանությունները» (խորենացու բառն է) բանականորեն մեկնելու, հրաշագերծելու և այդպես մշակված տարբերակով ընթերցողին ներկայացնելու մեջ:

Օրինակները բազմաթիվ են և շափազանց հանրահայտ, որպեսզի այստեղ դրանք կրկնելու անհրաժեշտություն լինի: Հիշեցնենք միայն Արտաշեսի, Սաթինիկի առասպելները: Միայն «ճշմարտեցման» մասին մեր ասածը շոշափելի դարձնելու համար վերհիշենք մանուկ Մանատրուկ արքայի ձյան տակից փրկվելու մի քանի էջ առաջ մեջբերված դեպքը, ուր առասպելում փրկվելն աստվածներից ուղարկված «նորահրաշ սպիտակ էակ» է, իսկ ըստ խորենացու «ճշմարտեցված» տարբերակի՝ պարզապես սպիտակ մի շուն:

Այսպես, ուրեմն, առասպելները խորենացու մոտ «երկփեղկ» են: Երկու փեղկերից մեկը, բուն առասպելը, իր ողջ կառուցվածքով, որպես միավոր վերցված է ժողովրդի բերանից, այնպես, ինչպես կա: Մյուս՝ «ճշմարտեցված» փեղկը խորենացու բանականության ծնունդն է, այն, որպես խնդրի լուծում

3 ՏԵՍ Գ. Սարգսյան. Մովսես խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները. — ՊԲՀ, 1992, № 2—3, էջ 27—50:

փնտրված է ու գտնված: Բայց այդ երկու փեղկերը հակադիր են, իրարամերձ: Նույն նյութի մասին մեկը մի կերպ է պատմում, մյուսը՝ բոլորովին այլ կերպ, «Ճշմարտեցումը» մերժում, քայքայում է բուն առասպելը: Միևնույն ժամանակ Պատմահոր նպատակն առասպելը «Ճշմարտեցնելիս» ժխտական, ավերիչ չէ ամենևին, այլ կառուցողական, արարիչ: Իր բանական մոտեցումներով հորենացին ցանկանում է ոչ թե ոչնչացնել առասպելը, այլ վերակառուցել, դտնել նրա թաքնված իմաստը, բացել «այլաբանությունը» և պիտանի դարձնել բուն պատմության շարադրանքի մեջ օգտագործելու համար:

Նթե մենք այժմ խորենացիական առասպելը իր երկփեղկվածությամբ և դրանից ծագող հետևանքներով համեմատենք խորենացիական ստուգաբանությունների հետ, ապա դրանց մեջ նմանություն, գրեթե նույնություն կարձանագրեք:

Հիրավի, ստուգաբանությունները նույնպես երկփեղկ են: Փեղկերից մեկը ստուգաբանվող միավորն է, մյուսը՝ ստուգաբանողը: Դրանցից առաջինը վերցված է իրականությունից, աշխարհից, նաև առասպելից: Դա տոհմանուն է, անձնանուն կամ տեղանուն: Մյուսը, ստուգաբանողը, փնտրված է, գտնված որպես խնդրի լուծում, այսինքն՝ հորենացու բանականության արգասիք է, այն դեպքում, երբ մատուցված չէ «դրսից»՝ պատրաստի վիճակում (այդ դեպքում էլ «դրսում» է փնտրված ու գտնված): Ստուգաբանությունների երկու փեղկերը, ինչպես և առասպելների փեղկերը, հակադրություն են ներկայացնում և ակտիվ կողմը՝ ստուգաբանողը, որպես կանոն, քայքայում, մերժում է պասսիվ, ստուգաբանվող, կողմին, ճիշտ և ճիշտ, ինչպես «Ճշմարտեցումը»՝ բուն առասպելին, պարտադրելով նրան իրեն խորթ տեսք: Օրինակ, «արծուի ունի» ստուգաբանողը «Արծրունի» ստուգաբանվողին պարտադրում է լինել «Արծուի ունի»: Ճիշտ է, հորենացին գործը չի հասցնում մինչև այդօրինակ ձևափոխումները, քանի որ ստուգաբանվող տարրերը՝ տոհմանունները, անձնանուններն ու տեղանունները շափազանց հաստատուն են և ձևափոխման անենթակա, բայց որոշ փորձեր, այնուամենայնիվ, անում է, ինչպես տեսանք վերը⁴:

Միևնույն ժամանակ, հորենացու նպատակը՝ ստուգաբանելիս, ինչպես և առասպելը «Ճշմարտեցնելիս», ամենևին ժխտական չէ, այլ կառուցողական, արարիչ: Նա ցանկանում է ոչ թե խեղել ստուգաբանվող միավորը (կամ առասպելը), այլ իմաստավորել, դյուրըմբռնելի և, ի վերջո, պիտանի դարձնել իր ստուգաբանության մեջ ներմուծելու համար:

Այսպիսով, դիտարկված երկու ստեղծագործական միջոցները՝ հորենացու կիրառմամբ, իրենց բնույթով ակնհայտ հարազատություն են ցուցաբերում միմյանց նկատմամբ, գրեթե նույնանում են:

Որպես այդ հարազատություն-նույնության ցուցանիշ և խորհրդանիշ կարելի է ներկայացնել հորենացու կողմից առասպելների «Ճշմարտեցման» մի դեպք, որը միևնույն ժամանակ, նրա առաջարկած ստուգաբանություններից մեկն է: Դրան մենք արդեն վերը հանդիպել ենք, բայց արժե նորից մեջ բերել:

«Ձայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն եկեալ,— գրում է հորենացին,— որ է ինքն կայսր Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրա-

⁴ Օրինակները վերը բերված են: «Ծրուանդավան»՝ «Ծրուանդաւանի», «Մարաց մարգ»՝ «Մարանց մարգի», «Վահունի»՝ «Վահունու», «Հաւունի»՝ «Հաւ(ե)նունու» փոխարեն:

ման նորա և զգօրս այլաբանելով յանուն նորա կոչեն» (II, 54):

Այստեղ Դոմեստ-Դոմեստիանոս զույգը միաժամանակ և ստուգաբանություն է, և «ճշմարտեցում»: Հատկանշական է նաև «այլաբանել» բառի օգտագործումը: Այդպիսի մի դեպք է նաև Արգաան—Արգամ ստուգաբանություն—«ճշմարտեցումը»: Ասվածը չի նշանակում, թե խորենացու ստուգաբանությունների և «ճշմարտեցումների» միջև ոչ մի տարբերություն չկա: Նրանք ունեն իրենց օբյեկտիվ առանձնահատկությունները թե՛ մասնակիցների տարբեր բնույթի և թե՛ մշակման մեթոդների մեջ: Բացի այդ, ամենացայտունը դրանց սված արդյունքների տարբերությունն է: Եթե խորենացու՝ վառ գույներով շարադրած առասպելը նրա իսկ «ճշմարտեցուցիչ» մամլիչի տակով անցնելով դուրս է գալիս մեծ մասամբ նսեմացած, աղքատացած, գույները խամրած տեսքով, որը, սակայն, նրա համար գերադասելի է, ապա ստուգաբանության դեպքում պատկերը ճիշտ հակառակն է: Ստուգաբանված անունը ոչ միայն իմաստավորվում է (իհարկե, խորենացու ընկալմամբ), այլև, ասես, թե է առնում, լուռ ու մունջից դառնում խոսուն, նշանակալից, լույս է տալիս, հատկապես՝ տեղանունները: Օրինակ, Սիմ լեռը՝ Սեմով ստուգաբանվելով, աստվածաշնչական շուք է ստանում, «Գերեզմանք»-ը, որպես Բելի նետահարման վայր դառնում է պատմական հուշարձան, Մաթաթը՝ Մշակ-ով ստուգաբանվելով ստանում է իր հիմնադրման պատմությունը և այլն: Այդպես և՛ տոհմանունները, և՛ անձնանունները:

Մակայն, եթե առասպելի «գունաթափման» և ստուգաբանության «գունազարդման» երևույթը մեզ համար ակներև է, ապա խորենացու աչքում այն գոյություն չի ունեցել: Նրա քաղաքական (գնահատաբանական) սանդղակը մերից շատ է տարբերվում: Երկու այդ հակադիր արդյունքները նրա համար ունեն միևնույն արժեքը, միևնույն տարողությունը՝ երկուսն էլ «ճշմարիտ» են, երկուսն էլ հավաստի և պիտանի ներմուծվելու նրա ստույգ պատմության հյուսվածքի մեջ:

Մենք կիրառեցինք Մ. Աբեղյանի 100-ամյա պատմություն ունեցող «ճշմարտեցում» պատրաստի բնորոշումը, փաստորեն տարածելով այն, բացի առասպելներից, որոնց կապակցությամբ այն ներմուծված է, նաև ստուգաբանությունների վրա: Շարունակելով, մենք կարող ենք որոնել և գտնել «Հայոց պատմության» նաև այլ ոլորտներ, բացի երկու քննարկվածներից, որոնք ևս կարող են միավորվել այդ պիտակի ներքո և ծառայել, այսպիսով, խորենացու ստեղծագործական զինանոցի ավելի խոշոր, ընդգրկուն միավորների բացահայտմանը:

Որպես այդպիսի ոլորտի նմուշ, կարելի է բերել այն իրավիճակը, երբ միևնույն իրադարձության կամ երևույթի մասին Պատմահայրն ունեցել է տարբեր աղբյուրներից ծագող հակասական տեղեկություններ, որի առջև նա չի ընկրկել, այլ դիմել է «ճշմարտեցման» ուղուն: Իսկ, որպես դրա բազմաթիվ կոնկրետ օրինակներից մեկը, կարելի է ներկայացնել 40 տարի առաջ «Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես խորենացու մոտ» իմ հոդվածում հրատարակված հետևյալ դրվագը: Խորենացին պատմում է Տիգրան Միջինի՝ դեպի Պաղեստին կատարած արշավանքի, այնտեղից հրեա բնակչության, այդ թվում և քահանայապետ Հյուրկանոսի, գերեվարման և Հայաստանի քաղաքներում բնակեցման մասին: Խորենացու այս ծավալուն հատվածը գրեթե ամբողջությամբ կրկնում է Հովսեպոս Փլավիոսի «Հրեական պատերազմի» հա-

մապատասխան հատվածը, բացի ...արշավանքի մասնակիցների անուններից և գերեմարտության պարագաներից, Հովսեպոսի մոտ հայերի փոխարեն գործում են պարթևները, և այլն և, որ գլխավորն է, հրեից քահանայապետ Հյուրկանոսը գերեմարտում է ոչ թե Հայաստան, այլ... Բաբելոնիա:

Սակայն, ի հեճուկս Հովսեպոսի, Փափստոս Բուզանդը կարճառոտ հաղորդում է, որ Տիգրանն է Հյուրկանոսին գերեմարել Հայաստան... (IV, 55)

Մենք արդեն տեսանք, թե ինչպես է լուծել խնդիրը խորենացին: Հետեվե՛րք Փափստոսի հաղորդածին, նա Հովսեպոսի ամբողջ այդ դրվագը, իր մանրամասնություններով, շուտ է տվել հայերի վրա: Չմոռանանք, որ մեր խընդիրն այստեղ պատմական ճշմարտության բացահայտումը չէ ամենևին...⁵:

Իերված օրինակի մեջ սլարոնորոշ արտահայտվում է և «ճշմարտեցումը» Ավելին: Նրան հատուկ են առասպելների և արտահայտությունների համար վերը նշված բոլոր հատկանիշները: Նախ, ներկայացված օրինակը «երկփեղկ է՝ կազմված երկու տարբեր աղբյուրների տվյալներից: Ապա, այդ տվյալները հակադիր են, իրարամերձ: Նույն նյութը նրանք տրամագծորեն տարբեր ձևով են արտացոլում: Բուզանդի ասածը մերժում, քայքայում է Հովսեպոսի արած պատմությունը: Միևնույն ժամանակ խորենացին, Հովսեպոսի պատմածը Բուզանդով «ճշմարտեցնելիս», ունի ոչ թե ավերիչ, այլ արարիչ, կառուցողական նպատակ՝ դարձնել այն իր պատմության դրվագներից մեկը:

Ինչպես ականարկվեց վերը, այս ոլորտից կարելի է և շատ ուրիշ օրինակներ բերել: Իսկ մեր կարծիքով, ավելի մանրազնին և լայն դիտարկելով ամբողջ խնդիրը, կարելի կլինեք այս նույն համակարգի մեջ ներգրավել խորենացու պատմության նաև այլ ոլորտներ:

ЭТИМОЛОГИЯ СОБСТВЕННЫХ ИМЕН В «ИСТОРИИ АРМЕНИИ»
МОВЕСА ХОРЕНАЦИ

Академик НАН РА **Г. Х. САРКИСЯН**

Резюме

В статье проводится системный анализ всех собственных имен, для которых Мовес Хоренаци дает этимологии в своей «Истории Армении». Эти собственные имена — общим числом 84 — подразделяются на три группы: 1) патронимиконы, 2) личные имена, 3) топонимы. Изучение данного материала показывает, что Хоренаци широко применял метод «народной этимологии», который вполне характерен для его эпохи. Этимологии в свою очередь распадаются на три группы, по способу их реализации. Самой распространенной среди этимологий Хоренаци является простая этимология, когда этимологизируемое слово целиком или частично входит в ее состав (например, Мажак — *Миак*, Вахуни — *Вахагн*). Таких этимологий у Хоренаци примерно 66 единиц. Вторая группа — это — «скрытые этимологии», когда этимологизируемое слово передано посредством его близких или отдаленных эквивалентов, либо же — функциональ-

⁵ Իսկ եթե դռնանք դրան, ապա Հ. Մանանդյանը, այնուհետև նաև մենք, փորձել ենք որսալ այս դրվագի մեջ պարունակվող ստուգ-պատմական տարրը (տե՛ս Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 257.— Բնաբեր Մտենադարանի», 1956, № 9, էջ 31—36):

ного описания (например, Спандуни—спанд, Цронк—црвел). Подобных этимологий—8. Третья группа—«двуличная этимология», когда этимологизируемое слово расчленяется на две части, каждая из которых этимологизируется отдельно (например, Абгар—*аваг айр*, Гнуни—*гини уни*). Нами зафиксировано 6 подобных этимологий.

THE ETYMOLOGY OF PROPER NAMES IN THE HISTORY OF ARMENIA
BY MOVSES KHORENATSI

Academician of the NAS of the RA **G. Kh. SARGSIAN**

S u m m a r y

The author presents a systematic analyses of all proper names for which Movses Khorenatsi gives etymologies in his «History of Armenia». These 84 proper names are divided into 3 categories: 1) patronymics, 2) personal names, 3) toponyms. The investigation of this data shows that Khorenatsi had used the method of «folk-etymology», which is typical in his period. In their turn, the etymologies consist of 3 groups, according to the method of their realization. The most common among the etymologies of Khorenatsi is the simple etymology, when the key-word appears in the proper name (for example, *Mazhak-Mshak*, *Vahuni-Vahagn*). Khorenatsi offers 66 such etymologies. The second category is the «hidden etymology», when instead of the key-word one of its close or distant equivalents are in use, or by means of its functional description (for example, *Spanduni-spand*, *Tsronkh-tsreve!*). Khorenatsi has 8 etymologies of this type. The third category is the «twofold etymology», when the proper name is divided into two parts, both being etymologized separately (for example, *Abgar-avag ayr*, *Gnuni-gini uni*). We have fixed 6 such etymologies.